



COVID-19 -ի դեմ պատվաստանյութեր հնչ պետք է իմանալ ծնողները

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ COVID-19-Ի ԱՄԵՆԱԿԱՏ ՅԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ

- Չնայած երեխաները սովորաբար ավելի թեթև են տանում COVID 19-ը՝ նույնիսկ առողջ երեխաները կարող են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալ, հիվանդանոց ընկնել կամ մահանալ: Երեխաները COVID 19-ի հետևանքով կարող են նաև ունենալ երկարատև հոգեկան և ֆիզիկական առողջական խնդիրներ (կոչվում է երկարատև COVID):
- COVID-19-ի դեմ պատվաստանյութը նվազեցնում է COVID-19-ով ծանր հիվանդանալու վտանգ: Այն նաև նվազեցնում է երկարատև COVID-ով հիվանդանալու վտանգը:
- COVID-19-ի դեմ Pfizer և Moderna բոլոր պատվաստանյութերը թարմացված (երկվալենտ) պատվաստանյութեր են: Սա նշանակում է, որ դրանք թարմացվել են՝ պաշտպանելու վիրուսի ավենանոր ենթատեսակներից:



COVID-19-Ի ԴԵՄ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ ՏՐԿՈՒՄ 6 ԱՄՍԱԿԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԲՈԼՈՐ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ

- **6 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները, որոնք՝**
 - Արդեն ստացել են պատվաստանյութի մեկ թարմացված դեղաչափ, համարվում են ժամանակին պատվաստված: Եթե նրանք ունեն իմունային անբավարարություն, կարող են լրացուցիչ դեղաչափեր ստանալ:
 - Երբեք չեն պատվաստվել կամ երբեք չեն ստացել թարմացված դեղաչափ, պետք է ստանան մեկ դեղաչափ:
- **6 ամսականից 5 տարեկան երեխաներին** կարող են անհրաժեշտ լինել մի քանի դեղաչափեր, ներառյալ առնվազն մեկ թարմացված դեղաչափը՝ ժամանակին պատվաստված համարվելու համար: Դեղաչափերի քանակը կախված է նրանց տարիքից և արդեն ստացած պատվաստանյութ(եր)ից: Լրացուցիչ տեղեկությունների համար խոսեք նրանց բժշկի հետ կամ այցելեք [cdc.gov/coronavirus/vaccine](https://www.cdc.gov/coronavirus/vaccine).



- Այն երեխաները, որոնք արդեն ունեցել են COVID-ի վարակ, դարձյալ պետք է պատվաստվեն:
- COVID-19 դեմ պատվաստանյութերը կարող են տրվել մանկական սովորական այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

- Այցելեք ph.lacounty.gov/howtogetvaccinated՝ ձեր մոտակայքում տեղ գտնելու համար: Համոզվեք, որ նրանք ունեն ձեր երեխայի տարիքին համապատասխան պատվաստանյութը և հարցրեք **ծնողի/ խնամակալի համաձայնության մասին**: Դեղատների մեծ մասում չեն կարող պատվաստել 3 տարեկանից փոքր երեխաներին:
- Չանգահարեք Հանրային Առողջության Վարչության Պատվաստումների Չանգերի Կենտրոն՝ **1-833-540-0473** կամ **2-1-1**, եթե օգնության կարիք ունեք պատվաստանյութ գտնելու, փոխադրամիջոցի կամ տանը պատվաստվելու հարցում:
- Պատվաստանյութերն անվճար են բոլորի համար: Դուք ապահովագրության կարիք չունեք, և ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:





COVID-19 -ի դեմ պատվաստանյութեր հնչ պետք է իմանան ծնողները



ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԿՈՂՄԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ձեր երեխան կարող է ունենալ կողմնակի ազդեցություններ, որոնք նման են մանկական սովորական այլ պատվաստանյութերի դեպքում առաջ եկող ազդեցություններին: Դրանք սովորաբար **թեթև են և կանցնեն** մի քանի օրվա ընթացքում: Որոշ երեխաների մոտ կողմնակի ազդեցություններ չեն լինում:
- Տարածված կողմնակի ազդեցությունները ներառում են ցավ, այտուց կամ կարմրություն ձեռքի կամ ազդրի այն հատվածում, որտեղ պատվաստանյութը ներարկվել է, մկանային ցավ կամ հոդացավ, այտուցված ավշային հանգույցներ, ջերմություն, դող, գլխացավ, դյուրագրգռություն կամ լաց, հոգնածության զգացողություն, քնկոտություն և ախորժակի կորուստ:


COVID-19-ի դեմ պատվաստանյութի դեղաչափը հիմնված է ձեր երեխայի տարիքի վրա, այլ ոչ թե նրա չափսերի կամ քաշի: 12+ երեխաները ստանում են պատվաստանյութի նույն չափաբաժինը, ինչ մեծահասակները:



ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



- **COVID-19-ի դեմ պատվաստանյութերն անվտանգ են երեխաների համար:** Նախքան COVID-19-ի դեմ պատվաստանյութերը երեխաների համար առաջարկելը, հազարավոր երեխաների մասնակցությամբ կլինիկական փորձարկումներ են անցկացվել՝ ստուգելու պատվաստանյութերի անվտանգությունը և պարզելու, թե որքան լավ են դրանք գործում: Դրանից հետո Միացյալ Նահանգներում տասնյակ միլիոնավոր երեխաներ են պատվաստվել:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ենթարկվել են և կշարունակեն ենթարկվել ԱՄՆ-ի պատմության մեջ **անվտանգության ամենամանրակրկիտ մշտադիտարկմանը (հսկողությանը):**
- COVID-19-ի դեմ պատվաստանյութ ստանալուց հետո միոկարդիտի (սրտի մկանների բորբոքում) և պերիկարդիտի (սրտապարկի բորբոքում) հազվադեպ դեպքեր են գրանցվել երեխաների՝ հիմնականում 12 տարեկան և ավելի բարձր տարիքի արական սեռի ներկայացուցիչների մոտ: Այնուամենայնիվ, սրտի համար COVID-19-ի դեմ պատվաստանյութի ներկայացրած վտանգները շատ ավելի փոքր են, քան COVID-19-ով վարակվելու դեպքում:
- Ձեր երեխան COVID-19-ի դեմ պատվաստանյութից **չի կարող վարակվել COVID-19-ով:**
- Ոչ մի ապացույց չկա, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն ազդում են զարգացման կամ վերարտադրողականության վրա:



Հավելյալ տեղեկությունների համար այցելեք [cdc.gov/coronavirus/vaccine](https://www.cdc.gov/coronavirus/vaccine):

VaccinateLACounty.com



COUNTY OF LOS ANGELES
Public Health